



թ. 4. Աւետարան Աստուածատուրի տպարանին,
1729, էջ 248.
Ստորեւ ձախակողմը՝ ստորագրութիւն ԳՐ:

Տպագրութիւնները պատկերագրողները դիրքին բան մը չէր, ընդհակառակն բազմաձայս գործ մը նկատուած էր, որով հին Հայ տպարանատէրները կամ հրատարակիչները շատ ընդարձակ չափերով միջամուխ չէին ըլլար պատկերագործութեան մէջ: Խնժի ծանօթ հնագոյն առաջին իրապէս պատկերագրող հրատարակութիւնը Երեւանցի Ոսկան վարդապետին Աստուածաշունչն է, զոր մեկնակէս պիտի ընեմ այս աշխատութեանս:

Մեծադիր մաքուր այս հրատարակութիւնը երկու ասրի տեսեց մինչեւ տպագրուիլը, այսինքն 1666-8: Թէեղիկ սպէս կ'արտայայտուի այս հրատարակութեան մասին. « Առաջին անգամ էր որ Հայ մը այս տեսակ գեղեցիկ և ընդարձակ գործ մը Մամուլին կը յանձնէր... Տպագրութիւնը վայելուչ է, մաքուր, պատկերագրող, անխալ »: (Տիպ ու Տառ, էջ 165).

Ամստերտամ տպուեցաւ սակայն այս արժէքաւոր Հայերէն հրատարակութիւնը, որուն պատմութիւնը պիտի չտամ հոս, ոչ



թ. 5. Աստուածաշունչ Ոսկան ձ.ի, էջ 433.
(Տպ. Ամստերտամ, 1666), էջ 433.



թ. 6. Աւետ. Աստուածատուրի. տպ. 1729ի, էջ 239.
Տես ստորագր. ԳՐ վերեւի կտանկեան մէջ: